

Упрощенное
в 2-х частях...

616.2

С-69

29 JUL 2010

Handwritten signature in Armenian script, possibly "Մ. Ա. Մուսաբեկյան" (M. A. Musabekyan).

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԸ

ԵՒ ՆԲԱ ԴԷՍ ԳՈՐԾԱԳՐԵԼԻ

ՍԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԵՒ ԶԵՆՔԸ

«La fleur humaine est de toutes les fleurs celle qui aime le plus le soleil». (Michelet).

(«Մարդ կոչված ծաղիկը բոլոր ծաղիկներից էն ամենէն աւելի սրիւնէն է») Միշլե

Ք Ի Ֆ Լ Ի Ս

Երգարան Կոմիտասի Փոխարքայի Գիւանատան 1913.

1143 10 20 14

P. M. Shtern

610
167-26

616.2
69

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԸ

ԵՒ ՆՐԱ ԳԵՄ ԳՈՐԾԱԳՐԵԼԻ

ԻՍԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԵՒ ԶԷՆՔԸ

10331

«La fleur humaine est de toutes les fleurs celle qui aime le plus le soleil». (Michelet).

(«Մարդ կոչված ծաղիկը բոլոր ծաղիկներից էն ամենն առիկ արևատերն է»): Միշե

Արտատպումն արգելված է:

15 JUL 2013

5805

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Երկրագնդին վրա ամեն տարի տուբեր-
կուլտուրայի մահանում է 3 միլիոն մարդ:

Ո՞վ է ցնցվում այս ահեղի թւից:

Ոչ ոք:

Մի «Տիտանիկ» խորտակումից ով կեա-
նոսի ալիքները լափում են մի քանի հա-
րիւր մարդ:

Ամբողջ տիեզերքին մարդկութիւնը ցընց-
վում է, խղճահարվում և խելոյն սկսում են
ամենուրեք մտածել, հնար ու միջոց գտնել
նաւերն այնպէս ամրացնել, որ դրանք՝ աւե-
լի ու աւելի դիմացկուն դառնալով, իրանց
մէջ պատասպարվող մարդկանց կեանքը վը-
տանդից ու պատահարից ազատ պահեն:

Իսկ մարդկութեան այն ընդհանուր նաւը,
որը՝ խախուտ լինելով, չէ կարողանում
կեանքի ալիքների լափումից ազատել մարդ-
կանց և ամեն տարի 3 միլիոն զոհի պատ-
ճառ է դառնում միայն մի հիւանդութեան
հարուածների շնորհիւ, միթէ դրա բարե-
լաւման համար չարժէ մտածել և միջոց ու
հնար գտնել...

«Ճէրութիւնների և հասարակութեան
համար ամենաթանձագահն կապիտալը
մարդն է», — ասել է անցեալ դարու աւրա-
րիացոց թագապետներից միւնը:

Հիւանդութիւնների մարդկութեանը հաս-
ցըրած դժբաղդութիւններն ուժգին չափով
աւելի մեծ են քան որիէ ուրիշը:

Արանց առաջը առնել կարողանում է
միայն և միայն առողջապահութիւնը:

Չէնքը կայ, ով գիտէ զործադրել այն,
նա հիւանդութիւններին զոհ չէ տալիս, նա
զերծ է վտանգից:

Միայն տգէտն է, որ առողջապահութեան
հղօր նշանակութիւնը հասկանալուց զուրկ է:

Բժ. ԱՐՏԱՇԷՍ ՇԵՆԱՆ



Այս աշխատութիւնն մաս-մաս տպագրված
է «Մշակ» թերթում 1912 և 1913 թ.:

ԻՍԿԱԿԱՆ ԶԵՆԲ

— 0 —

Նորից յայտնվում է պատերազմ, անվերջ
պատերազմ մի թշնամու դէմ, որ տարին
տասներկու ամիս անարգել գործում է,
այստեղ հարուածում, այնտեղ մեռցնում,
այստեղ անմխիթար սարսափ գցում, այն-
տեղ լաց ու կոծ պատճառում. մի թշնամու
դէմ, որ գիտէ իր կործանարար գործու-
նէութեանը տալ մի խորապէս մտածված,
մանրամասնութիւններում նախատեսված
կազմակերպութիւն, և որի դէմ տարե-
կան միայն մի օր, գոնէ մեկ անում, նրա
զոհը՝ մարդը զուրս է գալիս ճակատամար-
տի, իր բոլոր անզօրութիւնը, գոնէ մեր օ-
րերում, քողարկելով զանազան յուսառատ և
միեւնոյն ժամանակ յուսախար իղձերով...
Անցնում է օրը, գալիս են օրերի, շաբաթ-
ների, ամիսների շարանները և դրանք, մեր
իրականութեան այդ աշաւուրը վկաները,
միայն արձանագրում են այդ թշնամու հին
զոհերի թւում նոր և նոր զոհեր, անհամար
զոհեր...

Այո, անհամար զոհեր:

Թուսաստանում այս տարի ևս թիֆլիսի
պէս երկու քաղաքի ազգաբնակչութիւն զոհ
է գնացել այդ թշնամու՝ տուբերկուլօզի
հարուածներին: 700,000 մարդ, բոլոր ան-
ցած տարիների օրինակին հետևելով, այս
տարի ևս մահացել է տուբերկուլօզից:

Մարդկային կեանքից կազմած մի զար-
հուրելի տուրք, որ 165 միլիօն ժողովուրդը
ստիպված է ամեն տարի տալ այդ գարշելի,
անյազ ազրայիլին...

Այս վշտալի երևոյթը լինում է մեզա-

նում, իսկ Եւրոպայում: Այստեղ տարէնը մահանում է՝

Գերմանիայում	150,000	մարդ
Ֆրանսիայում	120,000	»
Աւստրիայում	110,000	»
Ունգարիայում	70,000	»
Անգլիայում	60,000	»
Իտալիայում	60,000	»
Շվեդիայում	15,000	»
Բէլգիայում	12,000	»
Շվեյցարիայում	8,000	»
Նորվեգիայում	4,000	»

Սակայն ինչո՞ւ այսպէս ամեն տարի այսքան մարդ գոհ են դնում այս տուբերկուլոզ անուանված ցաւին: Արդեօք տուբերկուլոզն է անսահման դաժան, թէ՞ մարդն է բոլորովին անդէն նրա դէմ: Արդեօք գործադրված միջոցները չեն թերի:

Պէտք է ասած, որ մարդիկ ուզում են այս պատուհասի զարգացումը խափանել, բայց չեն աշխատում գտնել այն միջոցները, որոնք արդելին այդ ցաւին երևան գալ, և այդ է պատճառը, որ մենք այժմս նմանվում ենք այն մարդկանց, որոնք զբաղված են հանդցնելու հրդեհը մի տեղում և չեն տեսնում, որ ուրիշ տեղերում նոյն կրակը նորից և շարունակաբար նոր բոցեր է արձակում:

Տուբերկուլոզը միայն լոկ մի վարակիչ հիւանդութիւն չէ. նա մի հասարակական, սօցիալական շարիք է և իբրև այդպիսին՝ նրա գոյութիւնը, տարածումը արդիւնք է արդի հասարակական կեանքի բարդ և բազմատեսակ ու բազմաթիւ պայմանների թելութեան:

Մենք տեսնում ենք, որ քաղաքակիրթ երկիրներում տուբերկուլոզը օր աւուր զինաթափ է անվում. ամեն մի օր նրա զինանոցից մի զէնք է պակասում:

Բայց զուգընթացաբար այդպիսի երկիրներում անհետանում են և ուրիշ վարակիչ հիւանդութիւններ:

Եւ ո՞րն է այն ընդհանուր զէնքը, որ այդ հրաշքներն անել է ապիս:

Առողջապահութիւնը, գոյութեան կուրլաւորոյն զէնքը:

Առողջապահութիւնն եւրոպացուն աւելի և աւելի դիմացկուն է դարձնում. և նա իր առողջութեան թշնամիներից չէ վախենում, նա ինքն է նրանց ի փախուստ դարձնում. այդ թշնամիները նրա մարմնի ոչ մի մասում իրանց համար յարմար թոյլ կողմեր չեն դնում:

Իսկ մեզանում բոլորովին այլ բան է կատարվում: Ահա թէ դր. Բլիւմէնտալի ցուցահանդէսի ցուցակներից մինը ինչ է ասում:

Ռուսաստանում 10,000 բնակչից տուբերկուլոզով հիւանդացել է՝

1895 թ. 21	մարդ	1902 թ. 29	մարդ
1896 թ. 22	»	1903 թ. 29	»
1897 թ. 22	»	1904 թ. 29	»
1898 թ. 24	»	1905 թ. 30	»
1999 թ. 25	»	1906 թ. 32	»
1900 թ. 25	»	1907 թ. 36	»
1901 թ. 28	»	1908 թ. 38	»

Ուրեմն տուբերկուլոզը լաւ պարարտ հող է գտել մեր հայրենիքի սահմաններում և հաստատել է մեզանում իր բոյնը:

Ինչո՞ւն է մեր երկրի այդ պարարտ հողը:

Նրանում, որ մեր ժողովուրդը ընդհանուր առմամբ շատ տղէտ է. իսկ տղիտութիւնը բացի տուբերկուլոզից նրան տանում է գցում և շատ ուրիշ չարիքների գիրկը:

Մեր ժողովրդի կենցաղը ամենատարրական առողջապահական պայմաններից գուրկ է: Իրա շնորհիւն է, որ օրէ-ցօր մեր ժո-

զովրդի դիմադրութեան այժը պակասում է, չքանում է, սպառվում է: Նրա կենսական պայմանները քանի դնում՝ աւելի վատթարանում են: Միշտ աւելի և աւելի զարգացող թանգութիւնը հասարակ դասակարգին դնում է ամեն կողմից նրան խեղդող պակասութեան շրջանակի մէջ: Նրա սնունդը, նրա բնակարանը, նրա հանգստութիւնը և այդ ամենը միասին հիւժժում են և հարկաւ տրամադիր դարձնում նրան թէ ուրիշ քայքայիչ հիւանդութիւնների և թէ մասնաւորապէս տուբերկուլոզին:

Ապա օդեմոլութիւնը, որ, տուբերկուլոզի հետ զրկախառնված և իրար «ալլահվերդի-եախշի եօլ» ասելով, մտնում է տգիտութեան զոհերի նկուղները՝ այդ օդազուրկ բնակարանների կիսաքաղցած բնակիչներին տանջանքների ծովը գցելու համար:

Ահա այս պէս-պէս թերութիւններն են, որ արձանագրել են տալիս վերոյիշեալ ցուցակների տխուր թւերը:

Եթէ այս այսպէս է, ուրեմն և տուբերկուլոզի դէմ մաքառելու գործում հարկաւոր գլխաւոր զէնքը ժողովրդական լուսաւորութիւնն է:

Թո՛ղ ու՛մ հարկն է և պատկանում է, լաւ, ազնիւ, անշահասէր և մարդասէր վերաբերմունք ցոյց տայ դէպի իր հոգատարութեան յանձնված ժողովուրդը, օրինակ՝ թո՛ղ քաղաքային վարչութիւններն աշարուրջ կերպով հսկեն, որ խմելու մաքուր և առողջարար ջուր առատապէս մատակարարվի նրան, թո՛ղ մթերքների գները իսկական հանրամատչելի նօրմաների մէջ գրվեն, թո՛ղ օդառատ և արևաշող բնակարաններ կառուցվեն և մատչելի գներով վարձով տրվեն բանւոր, աղքատ դասակարգին. չէ՞ որ օդը շնչառութեան համար նոյն հացն է,

զանազանութիւնը միայն նրանումն է, որ այդ աւելի կարևոր հացը շնչվում է ուտվելու փոխարէն: Թո՛ղ փողոցները մաքուր լինեն միշտ, առանց փոշու, թո՛ղ աշխատանքի վարձագինը այնքան բաւարար լինի, որ աշխատաւորը իր պարէնը սօսնալու համար ստիպված չը լինի յոգնածութեան մատնվելու:

Այսքան «թո՛ղ»-երը իրագործելի ցանկութիւններ են: Դրանց իրագործելու համար հարկաւոր է միայն բարի կամք և մարդասիրութիւն:

Եւ այս վաղուց արդէն իրականացած «թո՛ղ»-երն են, որ Եւրօպայում թէ տուբերկուլոզը և թէ ուրիշ վարակիչ հիւանդութիւններն անհետացրել են կամ անհետացնելու աստիճանի հասցրել:

Ծանր է պատերազմը, սակայն միակ զէնքը, որ կարող է յաղթութիւն շահել ահարկու թշնամու՝ տուբերկուլոզի դէմ, ո՛չ սանատօրիաներն են, ո՛չ ծաղկեվաճառութեան տօները և ո՛չ որևէ հաստատութիւն, այլ միակը—ժողովրդական լուսաւորութիւնն եւ անողջապահութիւնը:

Առողջապահութեան օրէնքներով ու կենցաղով մշակեցէք հողը, և տուբերկուլոզի սաղմերը այդ ազնուացած հողի մէջ չեն աճի, ինչպէս որ մշակված հողում փուռն ու դատասկը չեն աճում:

Սանատօրիաներն և նման հիմնարկութիւնները չեն առողջացրել եւրօպացուն: Այդ տեսակի հիմնարկութիւնները «արտօնեալ» դասակարգի համար են:

Սակայն տուբերկուլոզի նման պատուհասից ամենաշատ տուժողն «արտօնեալը» չէ, այլ հասարակ ժողովուրդը:

Թո՛ղ տուբերկուլոզի դէմ մաքառողները այս հարցերի մասին ուշի ուշով մտածեն, ապա և սկսեն աւելի նպատակաշարմար գործ:

ԿԻՆՆ ՈՒ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԸ

Տուբերկուլոզի անընդհատ զարգացումն ու տարածումը վերջապէս մեզանում էլ թօթափել են հասարակութեան անտարբերութիւնը և առաջ են բերել մաքառումն այդ անարկու պատուհասի դէմ:

Առաջներում միայն բժիշկներն էին աշխատում նրան սանձահարել, նրա դէմ միջոցներ, կտրուկ միջոցներ, գտնել թէ հիւանդին բժշկելու և թէ վարակման առաջ պատնէշներ դնելու համար: Այժմն այս մաքառման գործում ամենքն են մասնակցում. և որովհետև տուբերկուլոզի դէմ մաքառումը սօցիալական հարցերից ամենից սրբր տամերձն է, ուստի և հասարակութեան ամեն մի խաւ, ամեն մի անդամ իր յատուկ դիրքն է բռնում այս մաքառման գործում իր սրտակի դերը կատարելու համար:

Վերջին ժամանակներին հրատապ հարցերից մինն էլ կանանց հարցն է դառել: Շատ տարբեր կարծիքների և հայեացքների առարկայ է լինում այդ հարցը, երբ ամեն անգամ նրան մօտենում են: Մի կողմ թողնելով, որ նա ունի իր երզուեալ անկեղծ պաշտպանները և իր նոյնքան անկեղծ հակառակորդները, կինը՝ մարդկութեան ստեղծագործութեան զլիսաւոր գործօնն և որբանը լինելով, պէ՛տք է որ իր ստեղծագործածի պահապանը լինի թէ՛ ոչ: Ունի արդեօք և կինը իր դերը և պարտականութիւնները տուբերկուլոզի դէմ մաքառման գործում:

Երկու կարծիք չէ կարող լինել, որ, այն, կինը այդպիսի դեր ունի: Աւելին կասեմ.

նա բոլոր մահաւիթ չարիքների դէմ մաքառման գործում ամենագործունեայ մարտընչողը պիտի լինի:

Կինը քոյր է, ամուսին է, մայր է: Հիանալի, անսման մի երբորդութիւն, որ շօշափում է նրա էութեան ամենանուրբ լարերը:

Ուրեմն և տուբերկուլոզի դէմ մաքառման գործում նա զինւորների առաջին շարքերում պիտի լինի և պէտք է զինված լինի բացի իր մշտնջենական, առանձնայատուկ սիրուց, գորովից, անձնուիրութիւնից՝ նաև գիտութեան ցուցադրած գիտելիքներով:

Այս չարիքի դէմ պէտք է իմաստօրէն մաքառել, իսկ դրա համար հարկաւոր է այդ չարիքը ուսումնասիրել՝ նրան ճանաչելու համար, իսկ պէտք է ճանաչել այն աւելի առաջ, քան նա արդէն յափշտակած է մարմնակազմը և արդէն իր քայքայիչ հարուածներն է նրան հասցրել: Նրան պէտք է այդ բոլորից առաջ ճանաչել, որպէսզի թոյլ չը տալ, որ նա մարդու մարմնի մէջ իր բոյնը շինի:

Զինւորական աշխարհում երկու ճանապարհ է պատերազմող զօրքերին դէպի յաղթութիւն տանում. մինը՝ պատերազմող մասսաներին ուժեղացնելով և վարժութիւններով պատրաստելով. միւսը՝ թշնամուն թուլացնելով: Նոյնը պէտք է անվի և տուբերկուլոզի դէմ յայտարարված պատերազմներում:

Տուբերկուլոզ առաջացնող մանրէն, կօխի բացիլը, մենք կարող ենք մեր յարձակումների առարկան դարձնել: Սակայն դժուարագոյն մի գործ, քանի որ մինչև օրս մեր ձեռքի տակ ունեցած և ոչ մի դեղ չէ պացուցել իր առանձնայատուկ, սպիտիֆիկ, բուժիչ ոյժը: Մնում է մեզ միայն երկրորդ

զէնքը՝ ուժեղացնել մեր մարմնակազմի ամեն մի խորշիկը, նրան դարձնելով ընդունակ այդ միկրոսպի յարձակումները յետ մղելու:

Ահա այս տեսակէտը հէնց ինքը որոշում է կնոջ գործունէութիւնը տուբերկուլոզի և առհասարակ մարդուս առողջութիւնը քայքայող այլ հիւանդութիւնների դէմ մաքառման գործում:

Կինը կարող է և պարտաւոր է ամեն միջոց ձեռնարկել իր սերունդը ֆիզիքապէս ուժեղացնելու համար: Սա մի բնական, և ստական պահանջ է:

Սակայն մեր արդի սօցիալական անհաւասարութիւնները շնորհիւ մնում են որևէ առողջապահական հսկողութիւնից և խնամքից զուրկ անհամար լիզէօններ աղքատ երեխաների, որոնց լափում է տուբերկուլոզը:

Ահա և մի նոր հոգատարութիւն, որ կնոջ ուսերի վրա է բարձում մարդասիրութիւնը:

Համառօտ գծերով աշխատեմ մօտենալ այս պարտականութիւններին և նկարագրել նրանց:

* * *

Կինը յղի է և պէտք է աշխարհ բերի մի երեխայ: Երեխայի ծնունդից շատ առաջ՝ նրա առողջապահութիւնը կնոջ մտածմունքի և հոգատարութեան առարկան պիտի լինի: Կինը պէտք է միշտ յիշէ, որ ուժեղ երեխաներ ծնվում են նմանապէս ուժեղ մայրերից. ապա ուրեմն յղութեան գոնէ վերջին ամիսներում յղի կինը պարտաւոր է հետու մնալ հասարակական կեանքի բազմատեսակ յոգնեցուցիչ հանգամանքներից և վայելքներից, երեկոյթներից, թատրօններից. և եթէ նրա ստորադրեալների թւումն էլ կան յղի կանայք, կինը պարտաւոր է և

նրանց վրա դարձնել նոյն հոգատարութիւնը:

* * *

Ծնվում է երեխան: Անխուսափելի մի պահանջ է գալիս մօր առաջ մեխվում: Ի՞նչպէս կերակրել նորածին մանկան: Շատ յաճախ բոլորովին մի աննշան պատճառ ստիպում է մօրը իր արգանդի պտուղը դնել մի վարձկեան ծծմօր զիրկը: Սակայն եթէ նրան բացատրէին, որ այդպէս անելով՝ նա իր երեխային զրկում է հիւանդութեան դէմ մաքառելու ընդդիմազիր ունակութիւնից, նա այդ չէր անի: Ինչո՞ւ: Որովհետև ծծմօր կաթը, լինելով թէև անդարար, չունի այն յատկութիւնները, ինչ որ ծնողմօր կաթը: Այս կաթը արտադրվում է նոյն խորշիկներից, որոնք մասնակցել են այդ երեխայի յղացման գործում, նրան սնել, կերակրել են դեռ նրա ծնվելուց առաջ: Այսպիսի կաթի ազդեցութիւնը երեխայի առողջ զարգացման վրա անհերքելի է: Այս ազդեցութիւնը առաջ է գալիս նրա (կաթի) մէջ պարունակվող զանազան նիւթերից, այսպէս անուանված՝ գիմազներից, որոնց և վերագրում է արդի գիտութիւնը օրգանական շիճուկների նպաստաւոր ազդեցութիւնը: Ապա ուրեմն այս տեսակէտից մայրական կաթը մի խսկական օրգանական շիճուկ է, որ անունդի հետ միասին պատուաստում է և վարակման դէմ. սակայն այսպիսի պատուաստող յատկութիւնը միայն մօրիցն է անցնում երեխային:

Ուշադրութեամբ կարդացէք հետեւալ ուշադրաւ խօսքերը, որ յայտնի թատերագրող Բրիտոյի «Փոխաբիւնողներ» պիէսում ասում է դօք. Ռիշօն. «Իժբաղդութիւնն էլ հէնց նրանումն է, որ մարդկային ցեղի վրա այնքան հոգ չեն տանում, ինչքան ձիւղնը...»

Մի անասնաբոյժ երբէք չէր թոյլ տայ, որ մի գեղազատ ձիու ծնունդը ծծէր մի լըծկան մատակի կաթը... Իսկ դո՛ւք, դուք ձեր երեխային ծծել էք տալիս կաթը այնպիսի մի կնոջ, որի մասին միայն մի վկայականից ունէք տեղեկութիւն, մի կնոջ, որի բաժակով դուք ինքներդ երբէք չէիք ցանկանայ խմել...»:

Այսպէս թէ այնպէս՝ տարիներն են անցնում, երեխան մեծանում է: Երևան են գալիս նրա դաստիարակութեան, ուսման հոգսերը: Երեխան թէև իր մօր աչքի առաջն է աշխատում, սակայն նա ենթարկվում է ամեն րօպէ վարակման վտանգին այն համբոյրներով, որ նա տալիս է և ստանում աջ ու ձախից, այն քարետախտակներով, որ ձեռքից ձեռք են անցնում, և որոնց վրա գրուածները համարեա միշտ ջնջվում-մաքրվում են անմեղ և միամիտ շրթունքների լորձունքով թրջած մատերով:

Վերջապէս գալիս է երկար տարիներով փափազած երջանիկ րօպէս. երեխան մրտնում է ուսումնարան: Նա ուշիմ է, ընդունակ է: Մտողները ստիպում են, որ նա աւելի և աւելի աշխատէ: Նրանք անհամբերութեամբ իրանց վառ երևակայութեան առաջ պատկերացնում են իրանց սիրելի ապագայ աշողութիւնների հեռանկարը...

Չէնց այն շրջանում, երբ երեխայի օրգանները զարգանալու վրա են, երբ նա աւելի կարօտ է և պահանջում է ամենօրեայ մաքուր օդի աւելի և աւելի մեծ քանակութիւն, երբ մի համաչափ, բայց ոչ սահմանաչափ սնունդ պէտք է նրան նիւթեր մատակարարէ աճման համար, դուք մտցնում էք նրան, ձեր երեխային, ուսումնարան,

փակում այդ բանտի մէջ, ուր ամեն ինչ խնայողութեամբ է բաժանվում, ուր շատ յաճախ արևն ու օդն անգամ առատօրէն չեն թափանցում:

Եթէ աշալուրջ քննադատութեան ենթարկելու լինենք մեր արդի ուսումնարանի պահանջները, դժբաղդաբար կը գանք այն եղբակացութեան, որ աշակերտը օրական 9—10 ժամ պէտք է զլուխը քաշ, մէջքը ծռած, օգից զրկված պարապէ, որպէսզի նա կարողանայ իւրացնել այն գիտելիքները, որ նրան աւանդվում են: Էլ ինչո՞ւ զարմանանք, որ երեխաները ժամ առաջ յոգնածութեան են հասնում, դեռ չը բացված գոցվում են, դեռ չը ծաղկած թառամում են:

Բանւորների համար աշխատութեան պահանջված 8 ժամից շատ աւելի են աշխատում երեխաները. սակայն չէ՞ որ մտաւոր աշխատանքը աւելի մաշող է, քան ֆիզիկականը:

Հարկաւ, պէտք է երեխաներին ուսում տալ, սակայն չը պէտք է մոռանալ, որ առողջութիւնն էլ նոյնքան անհրաժեշտ է: Հերբերտ Սպինսերի հետեւեալ աֆօրիզմը խոր մտածմունքի առարկայ պէտք է դառնայ: «Մարդս նախ և առաջ պէտք է լինի մի լաւ կենդանի, ուժեղ և զիմացիուն»:

Մայրեր, ձեր երեխաներից պատրաստեցէք կատարեալ մարդիկ, մշակեցէք նրանց միտքը, դասողութիւնը, բայց զանազան սնափառ մտադրութիւններով նրանց մի հիւծէք չափազանցութիւններով, նրանց ծանրաբեռնելով՝ դուք ինքներդ էք նրանց յանձնում տուրբերկուօդի բացիլին:

Ահա ձեզ մի հրատապ հարց, ուր մանկավարժութիւնը այնքան մօտենում է բնախօսութեանը, նաև անհատական և ընդհանրական առողջապահութեանը:

Տարակոյս չը կայ, որ ապագան պատկա-
նելու է ուժեղ ազգերին: Իսկ մի ազգ միայն
այն ժամանակն է իսկապէս ուժեղ, երբ նա
տալիս է բաւարար թւով բարոյապէս և ֆի-
զիկապէս ուժեղ և առողջ անդամներ:

Ձեր որդին դարձաւ մարդ, ձեր աղջիկը
դարձաւ կին: Ի ուժ կատարված էք տեսնում
ձեր մայրական պարտականութիւնը:

Բայց միթէ զբանով վերջանում է ձեր
զերը:

Ոչ:

Հասարակական, սօցիալական պատուհաս
է տուբերկուլոզը:

Եթէ տուբերկուլոզը յոգնածութեան, գու-
ցէ և անառակութեան աղջիկն է, նա նոյն-
քան և չքաւորութեան, թշուառութեան
ծնունդն է. նա ուժեղ հարուածներ է հասց-
նում նրանց, որոնք սոված են, նրանց, որոնք
գիշերներ են լուսացնում, նրանց, որոնք
ապալում է յոգնածութիւնը, ուժասպա-
ռութիւնը, կրակազուրկ օջախի անկիւնում,
կարճ խօսքով նրանց, որոնց համար տան-
ջանքն է սահմանված:

Տուբերկուլոզն ապրում է, աճում է քա-
ղաքների այն թաղերում, ուր կայ աղքա-
տութիւն, պակասութիւն, ուր փողոցները
նեղ են և մռայլ, ուր բնակարաններն եր-
բէք Աստուծոյ լոյսը և արևը չեն տեսնում,
ուր չը կայ առողջապահութիւն, չը կայ
ախտահանութիւն: Մի թոքախտաւոր բան-
ւոր մեռնում է իր նկուղում. հետեւալ օրը
այդ նկուղը վարձու է տրվում: Գալիս է
նոր վարձող, որ և շատ չանցած նոյն պա-
տուհասի, տուբերկուլոզի, զոհը պիտի դառ-
նայ: Եւ այնուհետեւ նա այդ տուբերկուլոզը
կը փոխադրէ իր հարեանին, կը փոխադրէ
իր արհեստանոցը, կուղարկէ ուսումնարան

իր երեխաների միջոցով. և այսպէս տու-
բերկուլոզը տարածվում է անընդհատ սրտ-
պանվելով, կարծես թէ վեստեան կոյսերի
պահպանած նուիրական հուրը լինի:

Այսօր տուբերկուլոզի դէմ մաքառման
գործին այնպիսի մի կազմակերպութիւն են
տալիս, որի նպատակն է միայն բացելը
հալածել և տուբերկուլոզաւորին բժշկել:
Սրա համար էլ բանւորական շրջաններում
հիմնում են բժշկական խորհրդարաններ,
դիսպենսարներ, կառուցվում են սանատո-
րիաներ: Ահազին միլիոններ են ծախսվում,
արպէսզի կառուցվեն լայնատարած հիմնար-
կութիւններ, որոնք պիտի զետեղեն իրանց
մէջ արտօնեալների մի սահմանափակ թիւ,
որոնք—ինչ կասկած—չը պէտք է մազա-
չափ պակասացնեն տուբերկուլոզի զոհերի և
մահերի շարանները:

Միշտ Գերմանիային օրինակ բերելով,
միշտ էլ խօսվում է նրա սանատորիաների
մասին և օրինակ են բերվում նրանք՝ իբրև
տուբերկուլոզի դէմ մաքառման ամենալաւ
և ամենակտրուկ մի միջոց և զէնք:

Առանց ուսումնասիրելու և յիշատակելու
Գերմանիայում գործադրվող ուրիշ միջոց-
ները, այժմս մաքառման մէջ են մտել և
աշխատում են տուբերկուլոզաւորին բժշկել,
մինչդեռ հարկաւոր է տուբերկուլոզի զար-
գացումը խափանել: Անգլիայում 50 տա-
րում առողջապահութեան բարւոքումը տու-
բերկուլոզի կտորածը 40 տոկոսից իջեց-
րել է 10,000-ից 13-ին. իսկ Անգլիայում
գործադրված միջոցներն եղել են հետեւալ-
ները. բնակարաններն առողջադործվել են,
փողոցները լայնացվել, գործարանները
մաքուր օդով լցվել և բարւոքվել է բան-
ւոր դասակարգի բարեկեցութիւնը:

1003
10331



*
*
*

Ահա այսպիսի մի գործում տեսե՞ք թէ գերմանացի կինը ինչե՞ր է անում:

Գերմանիայի «Կարմիր Սաչը» խաղաղութեան ժամանակ նմանապէս տուբերկուլօզի դէմ մաքառման գործի մէջ է մտնում:

1895 թ. պրօֆ. Պանվիլը համոզեց «Կարմիր Սաչը» վարչութեանը աւելի ընդարձակել իր գործունէութեան ասպարէզը. նա ապացուցեց, որ քսան տարվայ ընթացքում նրա գործունէութիւնը միայն նիւթեղէն հաւաքելուն էր կայացել, որ մինչև այդ չէր հարկաւորվել և քանի գնար՝ այնքան աւելի անպէտք պիտի դառնար (որովհետև պատերազմ չէր եղել և չը կար). միևս կողմից նա մատնացոյց արեց այն վտանգը, որ դալիս էր տուբերկուլօզից, այդ ներքին թշնամուց, որ աւելի ահաւոր պէտք է համարվէր, քան արտաքին թշնամին: Նա կարողացաւ եռանդ շարժել վարչութեան անդամների մէջ, որոնք և վճռեցին «Կարմիր Սաչը» նիւթեղէնը և նրա զանազան եկամուտները դնել տուբերկուլօզի դէմ մաքառողներին արամադրութեան տակ:

Այսպէս ուրեմն Գերմանիայում, ի թիւս զանազան հիմնարկութիւնների, կայ մի մեծ ընկերութիւն, որ իր հսկողական պէս-պէս գործունէութեան ճիւղերի մէջն աւելացրել է մի գերագոյնը, այն է՝ «Կանանց ազգասիրական միութիւնը», որի հովանաւորողն է ինքը կայսրուհի Աւգուստա-Վիկտորիան, և որի կենտրոնը Բերլինում է գտնվում: «Կանանց ազգասիրական միութիւնը» դէմ է ելնում ամեն մի պատուհասի, բուժում հիւանդներին, աշխատանք է գտնում պարապանգործների համար, օգնութեան է հասնում որբանոցներին, ընկեցիկ մանուկներին. մի խօսքով նա մասնակից է բոլոր այն գոր-

ծունէութիւններին, որոնց նպատակն է թիւթեղէնի հասարակական ծանր պատուհասների բերած չարիքները:

1899 թ.ին «Կանանց ազգասիրական միութիւնը» իր ցուցակադրում ունէր 171,938 անդամ. նա իր ծառայութեան մէջ ունէր 1072 կամաւոր և 384 մասնագէտ հիւանդապահ կանայք: Նրա ճիւղերից 294-ը գիւղութեան քոյրեր էին պատրաստում, 194-ը երեխաների մտերներ էին պահում, 40-ը որբանոցներ և ուսումնարաններ, 138-ը զանազան ձեռագործների կամ սնտեսութեան ուսումնարաններ, 126-ը կերակուր էին մատակարարում, 31-ը մատաղ աղջիկների ապաստարաններ և անկիւանոցներ էին պահում:

*
*
*

Ե՞րբ պէտք է Գերմանիայի այդ համակրելի հիմնարկութեան օրինակը տարածվի և մեր երկրում:

Մինչև այդ պէտք է անսպասման պատերազմ յայտարարել տուբերկուլօզի բոլոր դաշնակից-գործօններին, որոնց մէջ ամենահզօրն և ամենատարածվածն անտարակոյս օղեմոլութիւնն է:

Տուբերկուլօզաւորները կէսը խմողներն: Ուրեմն մաքառել օղեմոլութեան, արբեցողութեան դէմ՝ նշանակում է մաքառել տուբերկուլօզի դէմ:

Այստեղ էլ կինը իր օգտակար դերը և ազնուացնող ազդեցութիւնը կարող է ունենալ:

*
*
*

Իսկ վատառողջ ընկալարանը: Թող կանայք և այդտեղ մտնեն և մաքառեն օղի և արեւի սակաւութեան դէմ: Ուր արեւը չէ մտնում, մտնում է տուբերկուլօզը:

Մոռնալի պակասութիւնը, նրա վատ յատ-

կութիւնը նմանապէս տուբերկուլօզի օգնականներն են, որոնց դէմ պէտք է միջոցներ ձեռնարկել:

Այս բոլորի հետ միասին տուբերկուլօզի աջողութեանը նպաստում է և յոգնածութիւնը: Եթէ գործարանների, արհեստանոցների և այլն բանւորների աշխատելու ժամանակը օրէնքներով սահմանափակված է լինում, կան և այնպիսի աշխատւորներ, որոնք իրանց տանը աշխատելով՝ չը գիտեն ոչ չափ, ոչ սահման. սրանք ամբողջ օր ու գիշեր կուացած աշխատելով հազիւ կարողանում են ստանալ այնքան, որ գծուարութիւնով կերակրեն թէ իրանց, թէ իրանց երեխաներին:

Ահա այդպիսի խեղճ աշխատւորների դռները բաղխեցէք, կանայք, մտէք դրանց բնակարանները, թեթևացրէք նրանց դառն վիճակը, նրանց երեխաների հոգսը քաշեցէք, որպէսզի նրանք յոգնածութիւնից ուժասպառ լինելով տուբերկուլօզի ճիրանների մէջ չընկնեն:

Ահա մի շարք պատահական պատճառներ, որոնք թե ու թիկունք են դառնում տուբերկուլօզին, երբ նա մի տեղ անարգել մտնում է քայքայելու, հարուածելու, մահ տարածելու:

Ահա և մի ասպարէզ, ուր կինը, զինված իր առանձնայատուկ անձնուիրութիւնով և համբերութիւնով, կարող է գործել և պիտի գործէ:

Կնոջ փրկարար անձնուիրութեան, գթասիրութեան հանդէպ չքանում է, ոչնչանում և տուբերկուլօզի կործանարար ոյժը:

Այն, խնամելով տուբերկուլօզաւորին, ֆիզիկական բոլոր յիշածս միջոցներով, բժշկելով նրա հոգեկանը, հարթելով կեանքի

գծուարութիւնները, նրա երեխաներին կորզելով վարակման վտանգից, տալով նրանց հակատուբերկուլօզային կրթութիւն, նրանց ներշնչելով ահ օւ ատելութիւն դէպի օդին, սէր դէպի օդն ու արևը, կինը կատարած կը լինի իր կանացի պարտականութիւնը թէ դէպի իր անմիջական ընտանիքը, թէ դէպի համայն հասարակութիւնը:

Կինը կարող է այդ անել:

ԱՌՈՂՂԱՊԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԻՄՆԵՐ

— 0 —

Ներօպայում ամենուրեք մի զարմանալի յամառութեամբ ժողովրդի ամեն խաւերի մէջ հանրամատչելի լեզուով տարածվում են գիտելիքներ—պատգամների ձևով—վարակիչ հիւանդութիւններից մարդու ազատ պահելու համար: Հասարակաց սր վայրն էլ մտնես՝ կայարան, այգի, պօստատուն, հեռագրատուն, բանկ, ուսումնարան, եկեղեցի, խանութ, բժիշկների ընդունարան, բազմախօս, երկաթուղու գնացքներ, թատրօն, ցիւրկ, հիւրանոցներ, մի խօսքով ամեն մի տեղ, ուր բազմութիւն է հաւաքվում, պատերի վրա կպցրած կը տեսնես զանազան ցուցակներ, պլակատներ, որոնց վրա հասկանալի լեզուով և ոճով գրված են այդպիսի պատգամներ: Առողջապահութեան պրօպագանդայի լաւագոյն մի տեսակ:

Ահա մի նմուշ այդպիսի մի պրօպանդայի, որ վերաբերում է թէ տուբերկուլօզին, թէ սիֆիլիսին և և թէ այլ վարակիչ հիւանդութիւններին:

* *

1) Մի թողնէք, որ ձեր շուրջը թքեն գետնին:

2) Ուր որ լինէք, ձեր պարտքը լինի, գոնէ ուրիշին օրինակ ցոյց տալու համար, երբէք չը թքել գետնին:

3) Տան տիկիններ, մի թողնէք, որ սենեակները չոր աւելով աւլին, որովհետև փոշու ամենափոքր մասնիկն անգամ մանրէներէ, միկրօքներէ անհամար թիւ է ոտքի հանում:

4) Երբէք մի խմէք հում, անսփ կաթ,

մանաւանդ երբ ստոյգ չը գիտէք, թէ ինչ կովից է այն:

5) Եղէք սակաւակեր, ըստ կարելոյն բուսակեր, որպէսզի խնայէք մնդառական ձեր գործողութիւններն և նրանք երկար ժամանակ լաւ, առողջ դրութեան մէջ մնան:

6) Կաշուի լաւ գործողութիւնը պահպանելու համար—իսկ սա անհրաժեշտ է առողջութիւնը պահպանելու համար—գոնէ օրը մի անգամ լուացէք ամբողջ ձեր մարմինը տաք կամ պաղ ջրով: Սակայն ջուրը ինչքան պաղ լինի, այնքան լաւ կը լինի:

7) Եթէ դէպքով գործածած իր էք գնում, առանց ախտահանութեան մի գործ դնէք, նոյնը արէք և նոր բնակարան մտնելուց առաջ:

8) Ինչքան կարելի է՝ առատ օդ շնչեցէք ձեր թոքերով: Երբէք չը մոռանաք, որ երբ մի տան մէջ պակասում են օդն և լոյսը, սակաւարիւնութիւնն է երևան գալիս, որ հոդն է վատ և փասսաբեր սերմերի առհասարակ և տուբերկուլօզի մասնաւորապէս:

9) Երբէք ուրիշի բաժակով, թասով չը խմէք:

10) Մի գործածէք ուրիշի ոչ գրաւը, ոչ պատառաքաղը, ոչ թաշկինակը, ոչ անձեռոցիկը, ոչ երես֊սրբիչը, ոչ սպունգը, ոչ սանրը, ոչ էլ ակռայի վրձինը:

11) Մի ուտէք երբէք այն պտուղը, կամ խմորեղէնը, կամ այլ ուտելիք, որ ուրիշի շրթունքին կամ ախտներին է դիպել:

12) Խուսափեցէք ձեզ համբուրողներէ, բաւականացէք միայն ձեր ծնողների համբոյրներով:

13) Հէնց մանկութիւնից սովորեցէք համբոյրի մատուցանել միայն ձեր ճակատը, կամ թշերը, այն էլ եթէ ճակատի և թշեր

րի կաշին բոլորովին ազատ է որևէ նոյնիսկ
չնչին քերուածքից:

14) Երբէք մի թոյլ տաք, որ համբուրեն
ձեր աչքերը, կամ շրթունքները:

15) Երբէք մի հագնէք ուրիշի սպիտա-
կեղէնը:

16) Երբէք մի թոյլ տաք թքով, մանա-
ւանդ լեզուով, սրբել քարետախտակները:
Նմանապէս երբէք մի թոգնէք, որ թքով
կամ ուրիշի թաշկինակով սրբեն ձեր երեսը,
երբ պատահմամբ նրա վրա լինի ցեխ, թա-
նաք, մուր և այլն:

17) Մի թոյլ տաք, որ մինը իր թքով
սրբէ ձեր վէրքերը, ինչքան էլ որ սրանք
առհնաչնչիներից լինեն, օրինակ քերուածք,
մանր բշտիկներ և այլն:

18) Ձեր շրթունքները երբէք չը դնէք
հեռախօսի փողաբերանի վրա:

19) Կրօնական ծէսերի ժամանակ խուսա-
փեցէք շրթունքներդ մօտեցնել հասարակաց
չերմեռանդութեան առաջ դրած կրօնական
առարկաներին. բաւականացէք պատկառան-
քի մի խոնարհման շարժումով և հոգու-
երկրպագութեամբ, որպէսզի զբանով ա-
զատված լինէք հնարաւոր վարակումից:

20) Իցէ թէ մի հիւանդի բուկը դեղ էք
քսում, զգոյշ կացէք, որ նրա թաղանթը
զրգուելով ձեր երեսի վրա չը ցայտէ այդ
հիւանդի թուքը, որ լի է միկրօքներով:

21) Պէտք է անպայման խուսափել այն
մարդուց, որ խօսելու ժամանակ վատ սո-
վորութիւն ունի իր լսողի ճիշդ երեսին
մօտեակ, մանաւանդ եթէ նրա ձայնի բարձր
ելիէջները կամ ծիծաղը յաճախ պահուծ-
վում է թուքի ցողիկներով:

22) Եթէ մէկը թքելու վրա է, կամ
փռշտալու, կամ հաղալու, մանաւանդ հաղա-
լու, հեռացէք դրանից. չէ՞ որ նա արտադ-

րելու է թքախառն լորձուք, որ ընկնելով
ձեր կաշուի կամ թաղանթների վրա՝ կարող
է նրանց վարակել:

23) Տան տիկիներ, աղախիներ, հիւան-
դապահներ, գլուխեան քոյրեր, լուացարա-
րուհիներ, մի մոռնաք երբէք, որ կեղտոտ
շորեղէնի հետ գործ ունենալը վտանգաւոր
է: Մերկ ձեռներով չանէք այդ՝ Ուշադիր ե-
ղէք, որ ձեռներդ և երեսներդ, հէնց որ վեր-
ջացնէք ձեր գործը, իսկոյն լուանաք հա-
կանեխ հեղուկներով, օրինակ բօրաջրով:

24) Ճանապարհորդներ, հիւրանոցում իջ-
նելիս՝ լաւ ստուգեցէք մահճակալների սպի-
տակեղէնի անպայման մաքրութիւնը: Պա-
հանջեցէք, որ ամեն առաւօտ վերմակները,
բարձերը, սաւանները թափ տրվին և բաց
պատուհանների վրա օդումը փովեն:

25) Երաժիշտներ, ոչ փոխ տուէք, ոչ էլ
ուրիշից վերցրէք այնպիսի հնչիւնաւոր
գործիքներ, որոնք շրթունքով են նուազ-
վում:

26) Գիրքը թերթելիս երբէք մի թրջէք
ձեր մատները թքով, որովհետև վարակիչ
հիւանդութիւնների մեծ մասը փոխադրվում
է թքով:

27) Երբէք ձեր շրթունքների մէջ մի պահէք
զրչակոթ, որ ընդհանուրի գործադրութեան
համար է դրված, ինչպէս պօստատան, հե-
ռազրատան, բանկերում և այլն, նաև այն
փողը, որից վճարելու էք:

28) Բերանով մի թրջէք այն մատիտը,
որ մի ուրիշը ձեզ տալիս է, ոչ էլ այն նա-
մակի դրոշմը, որ գնում էք զանազան խա-
նութիւններում:

29) Երբ մի գործիք էք գնում, որի գոր-
ծադրութիւնը ձեր շրթունքների հետ կապ
պէտք է ունենայ, միշտ առաջ լուացէք, ա-
պա գործադրէք այն:

30) Եթէ բաղանիք էք գնում և ոչ տանը լուսացվում, միշտ մանրամասնօրէն ստուգեցէք մաքրութիւնը բոլոր իրերի, որոնք ձեր մարմնի հետ անմիջական շփման մէջ կը լինեն՝ լողարանը, սանրը, երես֊սրբիչը, ըսպունդը և այլն:

31) Ձեր մանուկների համար ծծ֊մայր վերցնելիս, լաւ քննել տուէք նրանց առողջութիւնը:

32) Ծծ֊մայրեր, երբ դուք վարձվում էք մանկան կերակրելու ձեր կաթով, նախ հաւաստիացէք բժշկական վկայականով, որ այդ երեխան բնական չէ վարակիչ հիւանդութիւններով: Թող երեխայի ծնողներն էլ ապահովացնեն ձեզ, որ նրանք նմանապէս զերծ են որևէ հիւանդութիւնից:

33) Սիֆիլիսը կարող է փոխադրվել պապերից թոռներին, թէև սրանց միջին սերունդը, ուրեմն հայրն ու մայրը, վարակված չը լինի այդ հիւանդութիւնով: Ապա ուրեմն, ծնողներ, դուք որ յուսահատութեան մէջ էք ընկղմվում, երբ ձեր ծնունդ֊երեխան թուլակազմ է լինում, և նրա սնունդն առատացնելու համար վճռում էք ծծ֊մայր վերցնել, զսպեցէք ձեր եսականութեան ձայնը և ծծ֊օր առողջութիւնը մի զոհէք ձեր երեխայի փրկութեան համար: Այսպիսի դէպքում բարեխղճութիւնն ու ազնւութիւնը պահանջում են ձեզանից, որ բժշկի միջոցով հաւաստիանաք, թէ ձեր երեխան միանգամայն զերծ է վարակիչ և փոխադրելի հիւանդութիւններից, և ապա միայն յանձնէք նրան վարձկան ծծ֊օրը:

34) Ընտանիքի մայրեր, դուք, որ արթուն պահպաններն էք ցեղի յարատուութեան, քանի դեռ նա չէ արթնացել անկիրթ մասսաների մէջ պատասխանատուութեան հետ խիղճն ու պարտաճանաչութիւնը, արի

հսկեցէք, որ ամեն մի ամուսնացող, անցներով երիտասարդութեան դուարճութիւնների բաղմատեսակ շարանները, ներկայացնի եթէ ոչ իր անարատութեան, գոնէ իր կատարեալ ֆիզիկական առողջութեան բժշկական վկայական, որպէսզի նա վտանգի չենթարկէ իր երիտասարդ ամուսնու և ապագայ երեխաների առողջութիւնը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

— 0 —

Առողջապահութիւնը վերջին տարիներս շատ փոփոխութիւններ է ենթարկվել, հետեւելով թէ իրան աշակցող գիտութիւնների առաջադիմութեանը և թէ այն հասարակութիւնների զարգացմանը, որոնց ինքը կոչված է եղել պահպանելու:

Այսպէս, օրինակ, բանախօսութեան, մարդախօսութեան, (անխօսալօզիա) և սրանց հետ կապ ունեցող ուրիշ գիտութիւնների — մասնաւորապէս փորձական հոգեբանութեան — առաջադիմութիւններին է այսօր պարտական առողջապահութիւնը այն հիանալի արդիւնքների համար, որոնք ստացվել են շնորհիւ անհատի ֆիզիքական և մտաւոր զարգացմանը:

Սրանից առաջացած անհատական առողջապահութիւնը դարձել է մանուկի և պատանու բովանդակ կրթութեան հիմնաքարը, հետեւաբար և մարդկութեան բարեփոխման էական գործօնը:

Երկրաբանութիւնից ու ջրաբանութիւնից էլ է օգտվել առողջապահութիւնը. վերջնենք հողի բազալութեան և կազմի ու ջրաբեր շերտերի վերաբերեալ սրանց տուած հետազօտութիւնները, որոնց և գործադրում է, երբ հարկ է լինում աղբիւրներ երևան հանելու, մարդկանց մաքուր ջուր մատակարարելու համար:

Մենք գիտենք նմանապէս, թէ առողջապահութիւնը որքան է օգտվում այն առաջադիմութիւններից, որ արել են ֆիզիկական

(ընադիտութիւնը) քիմիան, մեքենագիտութիւնը աների կառուցման, բնակարանների լուսաւորութեան, սրանց օդափոխութեան, խմելու ջրերի, թէ Գառանձին աներում, թէ ամբողջ քաղաքներում մաքրելու՝ մնացորդ նիւթերի ոչնչացնելու կամ չէզոքացնելու համար:

Իսկ այն առաջադիմութիւնները, որ առողջապահութիւնը ցոյց է տուել վարակիչ հիւանդութիւնների նախազգուշութեան գործումը, սրանք եղել են իսկապէս փայլուն և բեղմնաւոր: Եւ մանրէաբանութեանը (բակտերիօլօգիա) ու համաճարակաբանութեանն է նա պարտական, որ այնքան մեծ աջութեամբ է մաքառում այդ հիւանդութիւնների զարգացման դէմ, հիւանդութիւններ, որոնց մենք առաջ մատնված էինք, որովհետև դրանց դէմ յարմար դէնք ունենալու հնարաւորութիւնից և բազալութիւնից զուրկ էինք:

Սակայն պէտք է արձանագրել, որ գիտութիւնների արագ կատարվող առաջադիմութիւններն և նրանց գործադրվելը արուեստների մէջ՝ երբեմն վնասաբեր են եղել առողջապահական տեսակէտից, և առողջապահութիւնը պահ մի, կարծես, չէ եղել իր իսկական բարձրութեան վրա: Բայց այդպիսի մի պարտութիւն եղել է շատ կարճատև, և առողջապահութիւնը շուտով գտել է այն միջոցները, որոնցով նա զինվել է նոր ցաւի դէմ և նրան սանձահարել:

Այսպէս՝ ամեն մի նոր արուեստ, լինելով և նոր տեսակի վատառողջութեան աղբիւր կամ պատճառ, ծնեցնում է և երևան է բերում առողջագործման նորանոր միջոցների գործադրութիւններ:

Ամեն մի կեղծիք, դիցուք՝ կենսական միջերջների, առաջացնում է իսկոյն այն-

պիսի միջոցներ, որոնք և երևան են հա-
նում այն:

Մի խօսքով՝ առողջապահութիւնը վա-
տառողջութեան պատճառների վրա միջո-
ցադիտող է հանդիսանում:

Վերջին տարիներս առողջապահութիւնը
զարմանալի կերպով առաջադիմել է և զար-
գացել, և նայած հանգամանքներին այդ
կատարել են, թէ ինքը առողջապահու-
թիւնը, իբրև գիտութիւն, և թէ նրա ճիւ-
ղերը, իբրև գործնական գիտելիքներ:

Այսպէս դպրոցական, արուեստագործա-
կան և այլ առողջապահութիւնները շատ են
զարգացել և առաջադիմել ինքնուրույնաբար
հետեւելով կեանքի նրանց ցոյց տուած ա-
մենօրեայ պահանջներին:

Տեսէ՞ք՝ դպրոցական առողջապահութիւնը
առաջ միայն մի նպատակ ունէր, այն է՝
աշակերտներին զերծ պահել վարակիչ հի-
ւանդութիւններից, իսկ այսօր նա դրանով
չէ բաւականանում. նա իր սահմանները
լայնացրել է ու մեծացրել և յաւակնութիւն
ունի մասնակցելու ֆիզիքական, մտաւոր և
բարոյական կրթութեան: Ուրեմն դպրոցա-
կան առողջապահութիւնը հիւանդութիւն-
ների աշխարհից մտնում է այժմս մանկա-
վարժութեան սահմանները:

Արդ՝ ձրն է արդի դպրոցի նպատակը:

Չարգացնել և մեծացնել, ինչքան կարելի
է, անհատի սօցիալական և հասարակական
արժէքը.

Ինչով, ինչ միջոցներով:

Խելացիօրէն մշակելով, զարգացնելով և
կրթելով մանկան ֆիզիկական, մտաւոր և
բարոյական ընդունակութիւնները:

Իսկ առողջապահութեան մասնակցութիւ-
նը այս գործուի:

Նա՝ առողջապահութիւնը, բարձրաբար

բառ պահանջում է դպրոցի համար այն
բոլորը, ինչ վերաբերում է աշակերտների
առողջութեանը, ոչ թէ միայն և միայն
նրանց վարակիչ հիւանդութիւններից պահ-
պանելու համար, ոչ, դա շատ նեղ պահանջ
և նպատակ կը լինէր մեր այսօրվայ առող-
ջապահութեան համար. նա աւելի լայն
մտքով է իր գործին վերաբերվում և այս
պատճառով էլ ուզում է նպաստել աշա-
կերտների բովանդակ ֆիզիկական կրթու-
թեանը և յարմարեցնել մտաւոր զարգացումը
ամեն մէկի ֆիզիկական իսկական կարողու-
թեանը, ոյժերին: Չարմանալի չէ, ուրեմն,
որ դպրոցական առողջապահութիւնը դար-
ձել է կրթութեան և բնախօսական մանկա-
վարժութեան հիմնաքաղը:

Ահա՛ մեր արդի հայեացքները դպրոցի և
նրա տալիք արդիւնքի, նրանից սպասվող
գործի մասին:

Վերցնենք մի ուրիշ օրինակ:

Վարակիչ հիւանդութիւնների նախազդու-
թեան գործը, գիտելիքը, այսպէս ա-
նուանված՝ պրօֆիլաքսիան:

Սրա գոյութիւնը սկսվել է այն օրից,
երբ մանրէաբանութիւնը (բակտերիօլո-
գիան) և սրան աջակցող ուրիշ գիտու-
թիւնները համաճարակախօսութեան երբեմ-
նի անորոշ և տարօրինակ տեղեկութիւննե-
րի փոխարէն տալիս են մեզ այսօր ճշը-
գրիտ, հակիրճ և որոշ զաղափարներ, հաս-
կացողութիւններ հիւանդութիւնների թոյ-
ների մասին, նրանց տարածման պայման-
ների և նրանց ոչնչացնելու միջոցների
մասին:

Ինչքան մեծ է եղել ժողովրդական առող-
ջութեան օգուտը շնորհիւ առողջարար ջրե-
րի առաքումների, կամ զանազան մոծակ-
ների ոչնչացման — պահանջներ, առաջադրած

տիֆլի (շօրա), խօլերայի, տենդի կամ ժանտախտի նախազգուշական գիտութիւնից:

Այս սակաւաթիւ օրինակներից երևում է, թէ ինչպէս առողջապահութեան ամեն մի ճիւղը կերպարանափոխվել է, զարգացել է համաձայն այն նպատակների, որ առաջացրել է ընթացիկ կեանքը, և հետևելով այն գիտութիւններին, որոնցից նա քաղում է իր գործադրելի միջոցները: Այնպէս որ այդ գիտութիւնների կատարելագործութիւնները նշմարելի կերպով ազդում են և առողջապահութեան վրա:

Առողջապահութիւնը իր բոլոր ճիւղերով պէտք է մտցնել մեր կեանքի մէջ, եթէ ուզում ենք, որ ժողովրդական առողջութիւնը իր նօրմալ սահմանների մէջ լինի:

Առողջապահութեան զանազան ճիւղերը ինչպէս անցեալ անգամ ասացի, ամեն մի նը իր սեփական հաշւին, ցոյց են տուել մի մասնաւոր, առանձնակի և իրարից տարբերվող զարգացումներ: Միւս կողմից էլ առողջապահութիւնը, իբրև մի առանձին գիտութիւն, իր ամբողջութեան մէջ ենթարկվում է այնպիսի մի զարգացման, որի արտայայտութիւնները աւելի միակերպ են, որի մատչելիութիւնը աւելի ընդարձակ, և այս բոլորից այն հետևանքը, որ այսօր առողջապահութեան գործադրութիւններն ու նպատակը բոլորովին փոփոխված են: Այսպէս՝ մենք այսօր անհնում ենք, թէ ինչպէս անհատական պաշտպանութեան գործին աւելացել է նաև համայնքի պահպանութեան հոգը: Նոր նպատակ առողջապահութեան շանքերի համար:

Յամենայն դէպս թող ոչ ոք չը կարծէ, թէ համայնքի հոգսը այսօր առողջապահութեան ամբողջ գործունէութիւնն է կլանել և թէ անհատական առողջապահութիւնը

նսեմացել ևւ նուազել է յօգուտ համայնական առողջապահութեան: Ոչ նպատակն է միայն տեղափոխվել, և անհատական առողջապահութիւնը մեր շանքերի միակ նպատակը դառնալու կամ լինելու փոխարէն— ինչպէս առաջ էր այն— այսօր դարձել է մի միջոց միայն, որով մենք աշխատում ենք ապահովացնել թէ համայնքի առողջապահութիւնը և թէ ցեղի ապագան:

Առողջապահութեան այսպիսի մի նօրագոյն փոփոխութիւն պատահականութեան գործ չը պէտք է համարել, այլ բնական հետևանք մեր արդի հասարակական զարգացման, որովհետև նա ինքը գործօն է գիտութիւնների, առաջադիմութիւնների և արուեստների զարգացման:

Գիւղացի և երկրագործ բնակչութիւնները, որոնք առաջ ցիրուցան եղած էին ապրում, պարբերաբար սկսել են համախմբվել քաղաքային համայնքների՝ շնորհիւ արուեստների նրանց տաղարկած պահանջների և շնորհիւ հաղորդակցութեան այժմս կատարվող արագութեան և հեշտութեան: Համայնական կեանքի այս անընդհատ և արագ զարգացումը անշուշտ մեծացրել է մեր օրերում վարակիչ հիւանդութիւնների տարածման հեշտութիւնը և վտանգը, վատառողջութեան պատճառները, իսկ այս բօլորը (խօսքս ի հարկէ Եւրօպայի մասին է) առանձին անհատներին աւելի համախտ և համերաշխ է դարձրել առողջապահութիւնը կեանքում գործադրելու տեսակէտից:

Իսկ սօցիալական զարգացման կամ բարգաւաճման հետևանքների միւսն էլ եղել է գիւղախմբական առողջապահութեան ծնունդը և նրա արագ զարգացումը:

Համայնքներին խմելու առողջարար ջուր մատակարարելը, կղկղանքների ոչնչացնելը

կամ նրանց սուրբ բաղադրութիւններն փոխարկումները և այս վերջիններն արդիւնադարձիւր — այս և նրա նման շատ սուրբ հրատապ հարցերով է այսօր զբաղված Եւնուպայում քաղաքների առողջապահութիւնը։

Սակայն համայնքների և անհատների մէջ կարող են ծագել շատ անախորժ ընդհարումներ, որովհետև այժմ համայնքներն են զեկավարող այժ հանգիստանում ժողովրդի առողջութիւնը պահպանելու գործում։ Այստեղ օգնութեան պիտի գայ օրէնքը։ Նրա միջամտութիւնը պարզապէս սրողում է ամեն միջնի թէ գործունէութեան, թէ իրաւունքների և թէ պարտականութիւնների սահմանները։ Մասնաւոր անհատներ միշտ աշխատել են խախտել այն օրէնքներն և կանոնադրութիւնները, որոնք ժողովրդական առողջութեան վրա հսկող են կարգված. վայրի իշխանութիւնն էլ պարտաւոր է եղել միշտ ստիպել, որ այդ օրէնքները գործադրվեն ամենայն ճշգրտութեամբ։ Սրանից էլ առաջանում է անընդհատ մաքրումը, կամ խուլ կռիւր, որ տեղի է տւենում այս երկուսի միջև։ Այս մաքրումն աւելի խիստ է լինում նրա համար մասնաւոր, որ առողջապահութիւնը, իր զբաժնուպատակին հասնելու համար, սախոված է լինում շատ յաճախ սահմանափակելու անհատի ազատութիւնը, կամ աւելի ճիշդն ասած՝ զսպելու անհատի կամայականութիւնը, մինչև անգամ կամակորութիւնը։ Իսկական նպատակն է այս անել տալիս. չէ որ համայնքի ամեն մի անդամի առողջութիւնը ամենասերտ կերպով կապված է իր հարևանների առողջութեան հետ. չէ որ հէնց համայնքի բարդաւաճումը և նոյնիսկ ցեղի ապագան անշեղ կախված է ժողովրդի առողջութեան լիակատարութիւնից,

ամբողջութիւնից։ Այսպէս, ամեն օր յայտարարվում են նորանոր պարտաւորութիւններ, նորանոր պարտականութիւններ, նորանոր սահմանափակումներ. և այս բոլորը յանուն ժողովրդական առողջութեան պահպանման։ Այսպէս, օրինակ, պարտաւորեցուցիչ կանոններ. վարակիչ հիւանդութիւնների մասին ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդելու համար, ախտահանութեան վերաբերող օրէնքներ, ծաղիկի պարբերական պատուաստումների և նրա կրկնապատուաստումների մասին հրահանգներ, գործարանների աշխատանքներին վերաբերող կանոնադրութիւններ և այլն։ Առողջապահական օրէնքների և կանոնադրութիւնների ու կառավարութեան աւելի և աւելի աճող միջամտութիւնը, որ մինչև այսօր համարվում էր իբրև անհատի ազատութեան ձանձրալի մի սահմանափակում, այսօր արդարացի է նկատվում և հռչակվում, որովհետև այդ միջամտութիւնով ցեղի գերագոյն շահերն են պաշտպանվում։ Անհատներն և համայնքները պէտք է համահաւասար կերպով վայելեն առողջապահութեան հսկողութիւնը, որպէսզի ցեղի շահերը իսկապէս չը տուժն։

Եւրօպական ազդութիւնները վաղուց իրանց ապահովեցրել են զանազան համաճարակների հարուածներից, օրինակ՝ խօլերայի և ժանտախտի։ Այս նպատակները առաջ են բերել Կ. Պօլսի և Ալէքսանդրիայի միջազգային խորհուրդների հաստատումը, և Կարմիր ծովի ու Պարսից ծոցի հսկողութեան և ակտահանական հաստատութիւնները։

Չը նայած, որ արդի առողջապահութիւնը օր օրի վրա աւելի և աւելի ուժեղացնում է իր հսկողութիւնը համայնքների ա-

առողջապահութեան վերաբերմամբ. չը նա-
յած միւս կողմից և հասարակական առող-
ջապահութեան ընդհանրապէս ցոյց տուած
առաջադիմութիւններին, այսու ամենայնիւ
անհերքելի է այն վեասակար հետեանքը, որ
առաջանում է համայնքների աւելի և աւել-
լի խիտ և խռնված ապրելուց, որը և աջո-
ղեցնում է տուբերկուլոզի և սիֆիլիսի
նման վարակիչ հիւանդութիւնները ուժե-
ղացած թափով տարածվելը, կամ զարգաց-
նում է օղեմոլութիւնը և նման ախտերը,
շատացնում է տնիքի և քաղաքների վատա-
ռողջութեան պայմաններն ու պատճառները:

Իսկ սրանց սպառնացող վտանգը լուրջ և
խոր ուշադրութեան արժանի է. չէ որ սրան-
ցից տուժում է ոչ միայն իրանց ժամանա-
կակից հասարակութիւնը—օ՛, եթէ այդպէս
լինէր, դա դեռ չարիքի կէսը կը լինէր—
այլ սրանց հասցրած վնասը իր կործանիչ
կնիքը դրօշմում է մեր սերունդների վրա:

Եւ անս այս հասարակական շարիքները
դէմ մաքառման գործը առաջ մղելու համար
առողջապահութիւնը իրան անկարող զգա-
լով՝ կոչ է անում սօցիալական գիտութիւն-
ներին, նրանց օգնութիւնն է խնդրում
մարդկային ցեղը յիշածս վտանգներից ա-
զատելու համար:

Տեսնում էք, երբ առողջապահութիւնը
ինքը իր սեփական ոյժերի վրայ չէ կարո-
ղանում յուսալ, նա դիմում է ամեն մի
գիտութեան, միայն թէ անպատճառ իր
նպատակին հասնէ՝ մարդկութիւնը որեւէ
չարիքից, պատուհասից թաղտէ:

Առողջապահական մաքառման այն նոր
ըջանը, տրդի առողջապահութեան այս
վերջին—եթէ կարելի է այսպէս անուանել—
հանգոյցը՝ հասարակական առողջապահու-
թիւնն է:

Առողջապահութեան այս նոր յենակէտ-
ները մի առանձնապատուկ կերպարանք են
տալիս առողջացման գործին: Օրինակ, հէնց
տնային առողջապահութիւնը: Այսուհետեւ
չեն բաւականանալու միայն բնակարանի
նիւթական պահպանութեամբ, միայն նրա
մաքրութիւնը պահպանելով: Հասարակական
առողջապահութիւնը իր այսօրվայ նպա-
տակներն աւելի բարձր է ուղղոււ. նա
մտադիր է բանւորական բնակավայրերի
վրա գործադրել այն բարոյականացնող և
փրկարար ազդեցութիւնը, որ յատուկ է առ-
հասարակ յարմար և առողջ բնակարանին.
և իր այս նպատակին հասնելու համար նա
կոչ է անում զանազան ընկերութիւններին,
որոնք, վայելելով օրէնսդրութեան հովանա-
ւորութիւնը, սկսում են մատակարարել
բանւորին առողջ և էփան բնակարան, տա-
լով նրան միաժամանակ և հնարաւորութիւն
մի որոշ ժամանակամիջոցում դառնալ այդ
բնակարանի սեփականատէր:

Նմանապէս օրէնսդրութեան միջամտու-
թեանն է պարտական առողջապահութիւնը,
որ կռիւ է մղում օղեմոլութեան դէմ, որ
այնքան շարաշար փչացնում է ցեղի ապա-
զան և որի դէմ ինքը՝ առողջապահութիւնը
իր սեփական միջոցներով է ոյժով հաղիւ-
թէ կարողանար մաքառել:

Առողջապահութիւնը միայն իր ունեցած
նախազգուշական միջոցներով չէ կարող
տուբերկուլոզի անընդհատ զարգացումների,
սաստկացումների առաջն առնել: Ուստի և
նա դիմում է զանազան ընկերութիւններին,
փոխադարձ օգնութեան կամ կեանքը ապա-
հովող զանձարանների, որ իր՝ առողջապա-
հութեան, տրամադրութեան տակ դնեն
նիւթական միջոցներ, առանց որոնց ան-
կարելի է մի կարուկ, աջող մաքառում մղել

տուրքերիւլուղի պէս կործանելի թոյնի վտանգ
քի դէմ:

Արդի հասարակութիւնները դարգացման
անխուսափելի շարագուշակ հետեանքները
լինում են զանազան հասարակական պա-
տուհաններ:

Առողջապահութիւնը բոլորին դարձանել
կամ բոլորի առաջն առնել չէ կարող: Այդ-
պիսի դէպքերում նա նրանց՝ այդ պատու-
հասները դէմ բերում է զանազան հասարա-
կական միջոցներ, դարմաններ:

Այդ տեսակ միջոցների նա դիմում է,
երբ հարկաւոր է ապահովել երեխայի,
բանուորի ամփոփ առողջապահութեան պաշտ-
պանութիւնը, կամ երբ հարկաւոր է վննե-
րական վտանգը չէզոքացնել, կամ ապահո-
վել ամուսնութեան պտղաբերութիւնը, կամ
վերջապէս, պաշտպանել սերունդների ա-
պագան:

Համայնքների առողջապահութիւնը յա-
ջորդում է հասարակական առողջապահու-
թեանը:

Սակայն հասարակական առողջութեան
այսքան բարձր նշանակութիւն և առաջնա-
կարգ տեղ ստանալը ոչ մի դէպքում չէ
նշանակում համայնքների առողջապահու-
թեան անպէտքութիւնը կամ անանկու-
թիւնը:

Այստեղ կատարվել է միայն տեսակէտնե-
րի փոփոխութիւն, տեսակէտներ, որոնց
ենթարկվել է փոփոխաբար առողջապահու-
թիւնը, որպէսզի երևան հանէ այն նպա-
տակը, որի համար նա աշխատում է, և այն
նոր մեթոդները, որոնց նա գործադրում է
այդ նոր նպատակին հասնելու համար:

Տեսակէտներն ու մեթոդներն են տեղա-
փոխվել կամ կերպարանափոխվել, քայլ առ
քայլ հետեւելով մեր հասարակական զար-
գացմանը:

Սակայն այս բոլորի հետ առողջապահու-
թիւնը միշտ ծառայել է մեն միակ նպա-
տակի՝ այն է առողջապահական պաշտպա-
նութիւն անհատի, համայնքի և հասարա-
կութեան համար:

Եւ այսօրվայ առողջապահութեան գլուխ
գործոցը, նրա թագը՝ հասարակական ա-
ռողջապահութիւնն է:

* *

Եւրօպական ազգերը առաջադիմում են
ամեն կերպ, իսկ մենք դեռ շարունակում
ենք ամեն կերպ փախչել լոյսից... Ինչպէս
մեր գէւղացին այդ անում է, գետնի տակ
խոր թափնվելով Աստուծոյ լոյսից և գետ-
նափորի անցքերը ամուր, շատ ամուր փա-
կելով արևի առողջարար և կեանքը պայծա-
ռացնող ճառագայթների դէմ:

Խաւարից դէպի լոյս—անձ մեր հասա-
րակութեան անելիք գործը:

Այս է պահանջում և առողջապահութիւնը:

Ց Ա Ն Կ

	Երև
ՅԱՌԱՋԱԲԱՆ	3
ԻՍԿԱԿԱՆ ՋԷՆԻՔ	5
ԿԻՆԸ ԵՒ ՏՈՒԲԵՐԿՈՒՂՕՋԸ	10
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐ	22
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ	28

ՀԵՂԻՆՍԿԻ ՆՈՅՆ ՀԱՐՑԻՆ ՎԵՐԱԲԵ-
ՐՈՂ ՄԻԻՍ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Տուբերկուլոզը—[Թորախարը եւ
հասարակութիւնը 25 կօպ.
2. Туберкулезъ—чахотка и обще-
ство 25 коп.
3. Տուբերկուլոզը եւ նրա դէմ
գործադրելի իսկական մի-
ջոցներն ու գէնքը 15 կօպ.

Գ Ի Ն Ն Է 15 կօպ.

Գրմել հեղինակին՝ Բժ. Ա. ՇԽԵԱՆԻՆ, ԹԻՖ-
լիս, Գանժակայա փող. № 23.

«Ազգային գրադարան»



NL0267552

5805